

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 6/4

16 փետրվարի 2016 թ.

Քննարկվեց քաղաքացի Սամվել Ասլանյանի 15.01.2016 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 16.11.2015 թ-ի թիվ 1383/03 որոշման դեմ:

Քաղաքացի Սամվել Ասլանյանի գանգատում բերված փաստարկները.

2015թ. նոյեմբերի 19-ին Սամվել Ասլանյանը ստացել է ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի ժ/պ կողմից 16.11.2015թ. կայացված թիվ 1383/03 որոշումը (այսուհետ նաև Որոշում)՝ հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 55-րդ հոդվածի համաձայն՝ «Վարչական ակտն իր բովանդակությամբ պետք է համապատասխանի դրա ընդունման համար օրենքով սահմանված պահանջներին, նշում պարունակի այն բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք վարչական մարմինն հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշում», ինչպես նաև՝ վարչական ակտը պետք է պարունակի ակտով լուծվող հարցի նկարագրությունը (նկարագրական մաս), ակտի ընդունման հիմնավորումը (պատճառաբանական մաս):

Որոշման որևէ դրույթից պարզ չէ, թե ինչ փաստական և իրավաբանական հանգամանքներն են հիմք հանդիսացել վարչական մարմնի համար՝ նման որոշում (վարչական ակտ) ընդունելու համար: Նման տեսքով Որոշման ընդունումը չի համապատասխանում նաև Օրենքի 56-րդ հոդվածի պահանջներին, համաձայն որոնց՝ «1. Վարչական ակտը պետք է ձևակերպվի հստակ և հասկանալի: 2. Վարչական ակտի բովանդակությունը պետք է շարադրվի այնպես, որպեսզի դրա հասցեատիրոջ համար ակնառու լինի, թե իրեն ինչ իրավունք է տրամադրվում, իր որ իրավունքն է սահմանափակվում, իրեն ինչ իրավունքից են զրկում, կամ իր վրա ինչ պարտականություն է դրվում»:

Օրենքի 57-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ «Գրավոր կամ գրավոր հաստատված վարչական ակտը պետք է պարունակի հիմնավորում, որում պետք է նշվեն համապատասխան որոշում ընդունելու բոլոր էական փաստական և իրավական հիմքերը»:

Օրենքի 89-րդ հոդվածի համաձայն՝ «Դրամական պահանջներով նախատեսվող գումարների վճարման համար պարտականությունը կրում է այն անձը, ով պարտավոր է այդ գումարը վճարել՝

ա) իր համար կամ իր կողմից թույլ տրված խախտումների համար.

բ) մեկ այլ անձի փոխարեն»:

Մինչդեռ, Որոշման բովանդակությունից գանգատաբերին՝ որպես վարչական վարույթի մասնակցի և Որոշման համաձայն՝ «դրամական պահանջներով նախատեսվող գումարների վճարման համար պարտականությունը կրող անձի», պարզաբանված չէ, թե որոշմամբ թույլ տրված որ խախտումների համար է

պարտավորվում վճարել Որոշմամբ սահմանված գումարը, ինչ հաշվարկների արդյունքում և ինչ իրավական հիմքերով է առաջադրվել հենց այդ չափի գումարի վճարման պարտավորությունը:

Վերը նշված իրավական նորմերի և փաստական հանգամանքների վերլուծությունից ակնհայտ է, որ Որոշումն ընդունելիս վարչական մարմնի կողմից չեն պահպանվել օրենքով վարչական ակտի (տվյալ դեպքում՝ Որոշման) ընդունման համար սահմանված պարտադիր պահանջները, այլ կերպ ասած՝ Որոշումն ընդունվել է օրենքի պահանջների խախտմամբ: Հետևապես կիրառելի են Օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի դրույթները:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Օրենքի 69-րդ հոդվածի, 70-րդ հոդվածի 2-րդ մասի բ) կետի, 76-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի պահանջները Սամվել Ասլանյանը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի ժ/պ 16.11.2015թ-ի թիվ 1383/03 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի ժ/պ-ն, քննարկելով Սամվել Ասլանյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 13.11.2015 թ-ի դրությամբ նրա ԱԱՀ-ի գծով չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 1.570.030 դրամ:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի ժ/պ կողմից 16.11.2015 թ-ին ընդունվել է թիվ 1383/03 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Սամվել Ասլանյանից 1.570.030 դրամ պարտավորության գումար գանձելու մասին:

Տվյալ դեպքում Որոշմամբ քաղաքացի Սամվել Ասլանյանից 1.570.030 դրամ ԱԱՀ-ի գումար գանձման առաջադրելու համար հիմք են ընդունվել հետևյալ փաստական հանգամանքները.

ՀՀ Ոստիկանության Ճանապարհային ոստիկանության ծառայությունից ստացված տեղեկությունների համաձայն քաղաքացի Սամվել Ասլանյանը (անձ. AF 0732679) հաշվառված ք.Երևան, Չելսովի փող., 23 շենք, բն. 37 հասցեում, 2013 թ-ի հուլիսի 16-ին 150.000 դրամով վաճառել է «VAZ 2107» մակնիշի ավտոմեքենա: Այնուհետև, 2013 թ-ի դեկտեմբերի 23-ին 3.800.000 դրամով վաճառել է «Mercedes Benz» մակնիշի ավտոմեքենա, որը ձեռք է բերել 2013 թ-ի դեկտեմբերի 16-ին:

Հանձնաժողովը գտնում է, որ քաղաքացի Սամվել Ասլանյանի կողմից 2013 թ-ի դեկտեմբերի 23-ին «Mercedes Benz» մակնիշի ավտոմեքենայի վաճառքը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն համարվում է ապրանքի մատակարարում, հետևյալ հիմնավորմամբ.

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն. «Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի

կողմից իրականացված գործարքները համարվում են ապրանքի մատակարարում հետևյալ դեպքերում՝

...

բ. մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ անձի սեփականությունը կամ ընդհանուր սեփականությունը հանդիսացող նույն տեսակի հետևյալ գույքի՝ բնակարանի, առանձնատան (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), անձնական օգտագործման ավտոմեքենայի, գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի, ավտոտնակի՝ որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց օտարման դեպքերում ապրանքի մատակարարում է համարվում այդ ժամանակահատվածում երկրորդ և ավելի թվով նույն տեսակի գույքի օտարումը, եթե օտարումը կատարվում է տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում»:

Քննարկվող դեպքում քաղաքացի Սամվել Ասլանյանի կողմից իրականացվել է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետով նախատեսված ապրանքի մատակարարման գործարք, այն է՝ մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ կատարվել է նրա սեփականությունը հանդիսացող ավտոմեքենաների օտարում, որոնցից երկրորդն օտարվել է դրա ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ քաղաքացի Սամվել Ասլանյանը պետք է սահմանված կարգով ներկայացներ ԱԱՀ հաշվարկ և դրանում արտացոլեր վերը նշված «Mercedes Benz» մակնիշի ավտոմեքենայի վաճառքից առաջացած ԱԱՀ-ի պարտավորությունը, ինչը, սակայն, չի կատարվել:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի ժ/պ 16.11.2015թ-ի թիվ 1383/03 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ